

«Հայոց լեզու և գրականություն» առարկայի ընդունելության

գրավոր հարցազրույցի

տոմսի նմուշ

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է **g** գրվում (1 միավոր)

- 1) ուր—ախոտ, տր — ցակ,տխտղ—, հանդիպակա—
- 2) մր—ունակ, վար—կան,հար—ացուցակ,հինավուր—
- 3) մտա—ածին, որ—կտալ, խորհրդակ—ել,բաղ—ր
- 4) ընթեր—արան, պախուր—, ընդդիմակա—,ճրագալույ—

2. Ո՞ր շարքի բառերում են բոլոր բաղադրիչները անջատ գրվում.(1 միավոր)

- 1) օր (օրի), տարեց (տարի), վերից(վար), գիշեր (ցերեկ)
- 2) ոտից (գլուխ), հ(սրտե),հ(զուր), ուս(ուսի)
- 3) տնից(տուն), քիթ(քթի), ի(սկզբանե), իննսուն(ինը)
- 4) վաղուց (ի) վեր, երկու (հինգերորդ), ի (հեծուկս), ի (դեպ)

3. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են մեծատառով գրվում:(1 միավոր)

- 1) ՎԵՐԻՆ ԹՎԻՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ, ՓՈՔՐ ԱՍԻԱ
- 2) ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԷ, ՆԵՐ ԵՐԶԵԿԱ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԱՆԴԱԿ, ՄԵԾ ԱՐՁ
- 3) ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ, ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՅԻ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄԻԿԻՏԱՆ ՍԱՔՈ
- 4) ՀԻՆ ՀՈՈՄ, ՍԵՆ ԳՈՒԹԱՐԴ, ՏՐԴԱՏ ԾԱՐՏԱՐԱՊԵՏ, ԶԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ

4. Նշեցե՛ք այն բառը, որտեղ ի ձայնավորի հնչյունափոխություն չկա:(1 միավոր)

- 1) հայտնություն
- 2) կնքահայր
- 3) պարտիզպան
- 4) վերջնական

5. Նշեցե՛ք այն բառը, որի մեջ կա ան վերջածանցը:(1 միավոր)

- 1) վախճան
- 2) պատասխան
- 3) գերան
- 4) հեծան

6. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում –ներ վերջավորությամբ:(1 միավոր)

- 1) տոմսարկղ, ախտանիշ, այգաբաց, անտառապետ
- 2) անդրադարձ, անցագիր, գովազդ, երգեհոն
- 3) ընչացք, գյուղապետ, աշխատավարձ, դրոշմանիշ
- 4) թիկնապահ, խմբապետ, ծխախոտ, խորանարդ

7. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ան արտաքին հոլովման: (1 միավոր)

- 1) աշուն, դուռ, անուն, ձյուն
- 2) մահ, մանուկ, հիմ, ծունկ
- 3) եզ, բեռ, ուսում, արյուն
- 4) Մանուկ, ամառ, երդում, թոռ

8. Ո՞ր դերանունն է հոլովվում և՛ եզակի, և՛ հոգանակի թվով: (1 միավոր)

- 1) բոլորը
- 2) միմյանց
- 3) մյուս
- 4) ոչ մեկը

9. Ո՞ր շարքի բոլոր դերանուններ են ցուցական: (1 միավոր)

- 1) այս, դա, այսպես, բոլոր
- 2) մյուս, սույն, նույնքան, միևնույն
- 3) ոմն, այսպիսի, նույնպիսի, այնտեղ
- 4) այդպես, ոչինչ, նա, նույն

10. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման: (1 միավոր)

- 1) վխտացող, անսալ, կխայթի, ծորալիս
- 2) խոկում է, խոսող, հոգացել, որսա
- 3) գողացել, որսացել, տված, փղծկում է
- 4) վեր է կենում, աղացած, թիկնած, առած

11. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ձևաբայեր(կախյալ դերբայեր). (1 միավոր)

- 1) թռել, գալիս, նշած, նշի
- 2) կորցրել, երագում, նշել, ուտելու
- 3) առնում, առնելու, առել, առնելիս
- 4) փոխվելու, փոխվի, փոխվող, փոխվում

12. Ո՞ր բառերը չի կարող գործածվել որպես կապ. (1 միավոր)

- 1) դեմ
- 2) պես
- 3) միմյանց
- 4) հեռու

13. Շարահյուսորեն վերլուծել տրված նախադասությունը: (3 միավոր)

Անձրևի խոշոր կաթիլներն ուժգնությամբ զարկում էին վագոնների դռներին, փակ լուսամուտների ապակիներին և թրջում:

14. Ո՞ր հայրենով է շարադրված հետևյալ նախադասությունը: (1 միավոր)

« Ճանաչել զիմաստութիւն եւ զհարատ,իմանալ զբանս հանճարոյ»:

- 1) արևելահայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) միջին հայերեն
- 4) գրաբար

15. Գրիգոր Չոիրապի ո՞ր հերոսի մասին է տրված խոսքը: (1 միավոր)

«Պարտիզակցի սպասուհի մը՝ վերջին մնացորդ իր նախկին հարաբերություններուն, ավելցուցած բոլոր ստակը, իր վերջին հազար դրուշը կուտար իրեն, եթե զինքը կնության առներ»:

- 1) Սահակի
- 2) Մարտիրոսի
- 3) Չաբուղունի
- 4) Յուսէփի

16. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում հրաժեշտի ժամանակ ի՞նչ է նվիրում Հաճի աղային նրա անդամալույծ քույրը: (1 միավոր)

- 1) բրոյա գուլպաներ
- 2) բրոյա ձեռնոցներ
- 3) ասեղնագործ թաշկինակ
- 4) բրոյա շալ

17. Նշել թվերի համարները ըստ տողերի հաջորդականության. (1 միավոր)

- 1) Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև,
- 2) Մի ըստվեր անցավ, ծաղիկ կանաչ մեղմիվ շոյելով,
- 3) Սահուն քայլերով, աննշմար որպես քնքուշ մուրի թև,
- 4) Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ, ճերմակ շորերով

18. Ո՞ր բառակապակցությունն է բաց թողնված. (1 միավոր)

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.

-Քեզի ընծա,-:

- 1) հեգ հայրենիք
- 2) հին հայրենիք
- 3) որբ հայրենիք
- 4) իմ հայրենիք